

արքեպս. 1903ին: Ընդհ. պատերազմին՝ իր վիճակի ժողովրդեան հետ կը տարագրուի եւ պետական մասնաւոր արտօնութեամբ կ'ապաստանի Երուսաղէմ եւ մինչև զինագողար կը հիւրընկալուի Ս. Յակոբի վանքին մէջ. 1918ին կը մեկնի Եգիպտոսի ճամբով Պոլիս, ուրկէ կը վերագառնայ Նիկոմիդիա, բայց քիչ ժամանակէն Քէմալական շփոթներու պատճառաւ ժողովրդեան հետ Պոլիս կ'ապաստանի: Այժմ Ա. Պուլիարիոյ հայոց: Իր ընդարձակ կենսագրութիւնը տեսնել (Արախ. 1890 — 1891), ուր նկարագրուած է իր երկարամեայ Առաջնորդութեան բեղուն և շինարար գործունէութիւնը:

ՍՏՖԱՆՈՍ ԱՐՔԵՊՍ. ՏԱԹԵՒԻ.— Իր հօրեղբորը Շմաւոնէն յետոյ կը յաջորդէ իբր առաջնորդ Տաթևու. դաւանական խնդիրի պատճառով Սօֆի Խալիլ Աթապէկի կողմէն կը բանտարկուի ու կը շարչարուի, բայց համբերութեամբ կը կրէ տրուած անտանելի նեղութիւնները և կ'ազատի: ՁԼԻ (=1483) թուին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և Տնօրինական տեղերը և ապա կը վերագառնայ իր Աթոռը (Սիւսիս, էջ 528):

ՍՏՖԱՆՈՍ ԱՐՔԵՊՍ. ՏԱՐՍՈՆԻ.— Ա. Մլիճի վանքին. Ս. Յակոբի վանքին յիշատակ տուած է մագաղաթեայ Աւեսարակ մը (ՄՁ. Թ. 532). կը վախճանի 1320ին (տես իր մասին Սիւսուս, էջ 74, նաև Tisserant, էջ 350—353):

ՍՏՖԱՆՈՍ ԳՐԻՉ ԵՒ ԿԱԶՄՈՂ, ՍԵԲԱՍՏՍՅԻ.— Մբ. Լեռնակողման (Այնքեարիմ) հայոց Ս. Կարապետի վանքին մէջ կ'ընդօրինակէ ՊԼԹ (=1390) թուին բոլորգիր Մաշտոց մը Մըսըրբի Գրիգոր պոքքի օրով, ի խնդրոյ Ս. Յակոբի փակակալ Յովհաննէս կրօնաւորի (Ստաշակ, էջ 625): Այս ձեռագիրին յիշատակարանին մէջ յիշուած է նաև Յովհաննէս անուն դաստիար մը (ՄՁ. Թ. 661):

ՄՁ. Թ. 271 ճաշոցի գրչին յիշատակարանէն գատ, ուրիշ գրով հետեւեալ յիշատակարանը գրուած է Սեբաստացի Ստեփանոսէն. «Քս. Ած. ի քո միւսանգամ գալուստդ ողորմեայ առաջին ստացողի գրոյս *սեբ Դաւրի* և գրողի սորին Ստեփանոս կրաւնաւորի և այժմոյս առաջնորդացս և կրօնաւորացս և ամ. միանձացս առ հասարակ որ յեմ. եւ ընդ ամ. տիեզերս. նաեւ այնոցիկ որ յետ մեզ գալոց են: Ողորմիա Քս. Ած և Յովհաննէս»